ՂՈՒԲԱՅ Դ. ՔԱՂԱՔ

Ղուբայ քաղաքը գտնվում է Զամախուց հիւսիս, և Դարբանդից հարաւ, համարեա երկուսի մէջ տեղը, բայց Զամախուց շատ գժուարութեամբ, ըստ որում սարերի և ձորերի վրայով է անցնում։

Ղուբայ՝ որ և Մուսկուր և Ղուդիալ անուններն ունի պարսիկներից (այժմ Խաշման գիւղի շրջակայքը անուանւում է Միւշկիւր), Աղուանից աշխարհի քաղաքներից մէկն է, Կովկասու լերանց արեւելեան ստորոտումն, մի ձորակի մէջ, որոյ մօտովն անցնում է Ղուբայի գետը Ղուդիալ անունով։

Այս գետը յառաջանում է Կովկասու Զահդաղ և Ղուդիքար լեռներից և անցնում, գնում թափում է Կասպից ծովը, որ Ղուբայի արեւելեան կողմումն է 50 վերստ հեռի։

Ղուբան շինուած է պարսից Կուպատ[1]) թագաւորից ըստ աւանդութեան պարսից, 25 վերստ բարձր քան այժմեան Ղուբան, Կովկասու սարերի ստորոտումն. բայց քանի դար առաջ փոխադրել են այժմեան տեղը։ Սակայն իսկապէս Աղուանից թագաւորներից շինուած պէտք է լինի հին Ղուբան։ Ղուբայ բառը հարցնելու է Ուտիացւոց Նիժ և Վարդաշէն գիւղերի հայերից. նմանապէս և շատ այսպիսի յատուկ անուանք պէտք է որոնել Աղուանից և Ուտիացւոց լեզուի մէջ, ինչպէս և ուխտատեղերի անուանքն և գետերի և մինչեւ անգամ հասարակ բառերն եւս, որք անհասկանալի են, և պարսկերէն ենք կարծում լինել։

Ղուբայում կան 160 տուն հայեր, 1000 տան չափ մահմետականք, իսկ գետի միւս երեսին զառիվայր տեղում բնակուած են 1000 տան չափ հրէայք, որ պարապում են միայն առեւտրով, և մեծ մասամբ շրջիկ վաճառականութեամբ (փերեզակ—չարչի), ըստ հրէական բուն սովորութեան, իսկ հայք և պարսիկք վաճառականութեամբ, արհեստով և այգեգործութեամբ են պարապում։

---

[1])Խուդատ անունով իջեւանն եւս նոյն է հաստատում, որ Տապասարանի կողմումն է։